Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 1 «Հասմիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1. Տնօրենի տեղակալ ուսումնական գծով՝ մեթոդիստ՝ 1 դրույքային միավոր
2. Կրտսեր 1-ին խմբի դաստիարակ՝ 1,4 դրույքային միավոր
3. Հերթապահ դաստիարակ՝ 0,59 դրույքային միավոր

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մեթոդիստի՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալի որակավորման պահանջները՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Կրտսեր 1-ին խմբի դաստիարակի, հերթապահ դաստիարակի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Դիմող քաղաքացիները թիվ 1 «Հասմիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. մարտի 12-ից ապրիլի 8-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 17:00-ն:

Մրցույթը կկայանա 2026 թվականի ապրիլի 10-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնում /հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0/:

Տեղեկությունների համար զանգահարել 095 01 44 44 հեռախոսահամարով:

Հասցե՝ ք. Էջմիածին, Պատկանյան 37/2:
Էլ. հասցե՝ tiv11hasmik@mail.ru